ԹԱՐԹԱԹԵՐԹ

Բաժանորդագին ամեն տեղի համար տարեկան Ֆր· 10· — Վեցամսեայ Ֆր· 5· — Իւրաքանչիւր Թիւը կ'արժէ Ղրշ· 1· — Փոստի ծախք Խմբագրութեան կը վերաբերի· — Ծանուցմանց համար մասնաւոր սակարկութիւն·
—Հասցէ՝ — Տուփ թիւ 275, յԵգիպտական թղթատուն, յԱղեքսանդրիա [Եգիպտոս]·

Adresse. — Boite N. 275 (Poste Egyptienne) Alexandrie (Egypte).

Ա· ՏԱՐԻ | (Հ· Տ·) 4 ՅՈՒՆՎԱՐ 1889 | ԶՈՐԵՔՇԱԲԹԻ | 1889 ՅՈՒՆՎԱՐ 16 (Ն· Տ·) | ԹԻՒ 2

ԱԶԴ

ԹԷ և մեր ՆԵՂՈՍի Ա. թիւը Յունական Տարեգլխին հրատարակելու մտադիր էինք. սակայն նախապէս գիտնալով որ Տպարանապետն իրեն դրծոց մասնաւոր կարգադրութեանցը Համար չ'պիտի կարենար անցեալ շաբաթի մէջ մեր «ՆԵՂՈՍ»ը մատուցանել այն պատճառաւ պարտաւորեցանք Ա. Թիւը լատինական։ ինչ. Զին հրատարակել և շաբաթի մը միջոց տալ տպարանին, և յետոյ այնուրիկ շարունակել 3րդ թիւէն սկսեալ։

ԱԶԳԱՅԻՆ

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

"Արեւելք,, պատուական Լրագրոյ անցեալ Սեպտեմ. և 1413 թիւ թերթին մէջ սոյն վերնագրով Լա Թիւրքի է պատասխան դրուած մը կարդացինք՝ յորում Կ. Պոլսոյ առաջնակարգ երաժիշտներէն Պ. Բիզանի մեծ գովեստիւք կը խօսէր Ազգային երաժիշտներէն Պոտիան Էֆէնտի Սուրէնեանի մասին, նորա երկասիրած Հայերէն Տեր ողորմեայի խմբերգի առթիւ։

Իրաւ որ մենք բաղդ չունեցանք այդ նոր երգք ձայնով Տերողորմեան լսելու, սակայն ինչ որ ալ լինի վստահ եմք որ բաւական հաճելի դործ մը պիտի ըլլայ քանի որ Պ. Բիզան և նման առաջնակարգ երաժշտապետի մը վկայութիւնը կ'ընդունի, և մեք առաւել նորա համար ուրախ եմք որ ինքդրայն ենթակայ եղող անձն ալ Հայ է դործն ալ. ուստի և մեր խնդակցութիւնն կը յայտնենք առ Պոտիան Էֆէնտի Սուրէնեան որ միշտ բարի առիթներ կընծայէ թէ՛ իւր անձին և թէ իւր դործին վրայ խօսել տալու և թէ մեր խորին շնորհակալութիւնն կը յայտնենք առ հաճելաւորն Պարոն Բիզանի որ արժանապէս գնահատելով նոյն դործն, կը հաճակրի և կը դրուատէ վայելչապէս նորա աշխատաւորն, սակայն և մեղ ներուի այս առթիւ յայտնել մեր դիտողութիւններն որ թերևս կարէն լայս ընծայել դործին, որոյ մէջ մատ ունի դլխաւորաբար Հայ Եկեղեցին։

Եթէ մասնաւորապէս անհատի մը կ'ընդհանրապէս Ազգի մը համար իր չունեցած բանը ուրիշէն փոխ չառնելը՝ իր չդիտցած բանին դիտցողէն չուսանիլն եւ իր պակասութիւններն օտարին կատարելութեամբն չ'լրացնելն տեսակ մը յետադիմութեան, յամառութեան և մոլութեան նշան է, այսպէս ալ իր ունեցածին յաղդ չճանչցողով կոյր զլուրայն ուրիշին հետևիլն ալ կապկութեան, օտարամոլութեան, Ազգային անձնասիրութեան և՝ ազգային ոգւոյ պակասութեան նշան է։

Վասնզի՝ երբ մեր Ազգը խոկցանէ անտի իւր դոյութեան, թէ՛ ի կրապաշտութեան և թէ՛ ի Քրիստոնէութեան, ունեցած է և ունի ցայսօր մատնաւորաբար իր հոգեւոր երաժշտութիւնն,

Երբ մեր Ս. Եկեղեցւոյ առհասարակ պաշտօնեայք, Թագաւորք և Իշխանք, Բանաստեղծք և Քերթողք Կուսանք, և օրիորդք, ոգեղեաց ծնողք և հարբնաւոր տատուտարք, դորոյգուվի մայրեր և զուարթադէմ հայրեր յամենայն տեղիս դարերէ ի վեր այդ երաժշտութեամբ զԱստուած են փառաւորեր, բանակներ են վարեր, հարսանեկան տաղեր են՝ ձայներ, յաղթական դիւցազանց պատկ են հիւսեր, հրապարակային և ազգային տօնական պարեր են տարբեր, մատաղատի և սիրեցեալ վախճանելոց դագաղներն և դերեզմաններն են լացեր ու կոծեր, նորածին մանկանց օրօրոցներն են գուրգուրալով օրօրեր և վերջապէս ամենայն առթիւ եւ յամենայն տեղիս ի վաղուց անտի այդ երաժշտութեամբ եւ այդ եղանակներով են երգեր ու եղերերդեր։

Եւ երբ այդ նուիրական հասարը հընութիւնն իր ամբողջութեամբն չկորսնցնելու և յաւիտեան դոյաւ մնալ թարուելու համար յատուկ ձայնագրի (նոթա) դասագիրքն ալ յօրիներ և յանձներ է մեղ վերջին դարու սկիզբներն հանրաւորն ՊԱՊԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ,

Այլ ինչ մեղ փոյթ ՄԵՐ ունեցածն ձեռքէ հանել և ՕՏԱՐինին կարօտիլ։

Մինթէ մեր արևելեան եղանակին ընդաղ ախորժելի և նուազ ազդեցիկ է քան դարեմտեանն, քա՛ւ լիցի։ այդ վճիռը՝ չեմք կարծեր որ և ոչ մէկ եւրոպացի ձայնագէտ կամ մասնագէտ վարպետ մը որ ուսումնասիրած ունի արևելեան եղանակն իր ամէն ճիւղերովն, կարենայ հաստատել։

Ուրիշ խնդիր է այն որ ամէն մարդիւ մասնաւոր ճաշակն ունի և կամ իւրաքանչիւր հասարակութիւն իր օրօրոցէն վարժուած եղանակին աւելի կը հաճակրի։

Այսու հանդերձ մենք չեմք յամառիր պնդելով թէ մեր եղանակներն աւելի բարձր են և հաճելի քան զա բեմբասեանն։

Մենք Տաճկասանցիքս և մասնաւորաբար Հայերս բազդին բերմամբ ամենէն աւելի առիթ ունեցած եմք լսելու և գնահատելու արևմտեան բոլոր եղանակներն իրենց ամէն և մանրամասն ճիւղերովն, ամենաընտիր օրէրներ օրէրիթներ, սիրեանաներ, շանսոնիթներ, աղդային և եկեղեցական օրատորիաներ, երգեր և այլ ամենայն նուագածութիւնք և ամենուն ալ մասնաւոր հրապոյրներն վայելած եմք։

Նոյնպէս պատեհութիւն ունեցած եմք և ունիմք ամէն օր և ամէն տեղ լսելու արևելեան ամէն ազգի կրօնական երգեցողութիւն և օրինաւոր նուագածութեամբ Օսմանլը Ֆասլ մը իր բաղմաթիւ ձայնի աղղր և եիդրիակ Բէշրէֆներովն, Պէսթէներովն, Սէմայիներովն, Շարգիներովն և Կէզլենթիներովն։

Նոյնպէս Տիվան Ֆասլին իր Բէրէմովն Ղարիպովն, Բէօր Օղլուովն և Գալէնտերովն.

Նոյնպէս Հաճօ Ֆասլին, Թիւրքմէնի, Բիւրտի, Պօղլաք, Ուրֆա, Տիարպէքիր և այլն.

Նոյնպէս Սրապի, Ֆարսի և այլ ամենայն իրենց մանրամասնութեամբն և յետ ամենայնի սա եղրակացութեան յանդած եմք թէ արևելեան և արևմտեան առհասարակ ժողովրդոց երաժշտութիւնն իր մասնաւոր անուշութիւնն ունի։

Եթէ արևմտեանն կատարելութեան հասած իր ունկնդրին դրդիռ կուտայ, արևելեանն ալ բնական պարզութեամբն հանդերձ իր ունկնդիրը կ'ոգեւորէ։

Եթէ արևմտեանն իր *օրկեսթրին*, երդեհոնին և իր *թրոմբոն, սաքսոֆոն*, և *սաքսոյով* բարեխառնեալ *քաղցրանուագ քորոն* միջոցաւ զժողովուրդն կ'սքանչացնէ և կը յափշտակէ,

Արևելեանն ալ իր համախումբ և միաձայն ու պարզ ներդաշնակութեամբն զունկնդիրս կ'զմայլեցնէ և յերկինս կը վերացնէ։

Եթէ արեւմտեայ դեղանի ՄԱՐԳԱՐԻՏԱներ իրենց *մեհիստոֆիլ* ներու մատնաչափած կիթառի թռթռուն թելերու և *սերենատոյ* հեշտալուր ձայնէն յափշտակուելով համակրիլ և տեղի տալ կ'որոշեն,

Արևելեայ ամէն ազգի *ջիրաներ* ևս իրենց *մեանոնաներու* զարկած *սազին* դողդոջուն թելերուն և նոյա սոխականման կլկլացող ձայնին ազդեցութենէն կը խանարհին և սիրտերնին նոյա հետ կապել կ'ուխտեն։

Վերջապէս ինչ որ ՄԻՆՆ նոյնպէս և ՄԻԻՍՆ։

Բայց ասոնք երբ կը տեսնեմք որ աշխարհ արարատ ի սկզբանէ անտի մինչև ցայսօր ամէն կարգի արծաթի պղնձի, քարի և փայտի կտորներուն՝ ժամանակաւ այս ինչ թագաւորին, իշխանին, հայրապետին, գիտնականին, արհեստաւորին, զօրաւորին բարիին և չարին վերաբերելուն համար իրր հնութիւն (անթիքա) ոսկիներ, հոգիներ և դանձեր կուտան և կը պաշտեն, ու կը յարդեն զայնս, հապա սրբչափ առաւել պարտականութիւն է մեղ անփոփոխ պահել, պատուել ու պահպանել այն հնութիւնը, որ սուրբ է մեղ համար և նուիրական։

Մեզ բարեկամագրութեանց հակառակող չենք. մանաւանդ թէ ասելի վրայ փոխադարձք մեր Ազգ ոյժն կեանքին ամէն մասերաձեւութեանց մէջ գանուած անտեսի պակասներն ու թերութիւններն հեռացնելէ մասնաւորել, նոցա բարեփոխութիւնն առաջարկել ու խնդրել ըստ կարգի, իսկոյն եւ այնպէս մեր ազգէն ունեցած ազգային եկեղեցական և մասնաւոր երդեցողութիւնն ալ փոխանակ իրմով և իր մէջ բարեշարժելու՝ իրրև անպիտան և չնչին իր՝ եկեղեցիէն հեռացեալ արտաքսելով օտարին եղանակը կոյր զկուրայն պաշտպանելուն ալ համակիր և համաձայն չենք։

ՊԱՏՏՕՆԱԿԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՀԱՅՈՑ ԱԳԱՆՔՍԱՆԴՐԻՈՅ

ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՔ

Հինգշաբթի երեկոյ (5/17 Յունվար)

Սկիզբն	ի ժամ	3
Գասարաց	»	4
Վերջ	»	5½

Ուրբաթ առաւօտ (6/18 Յունվար)

Սկիզբն	ի ժամ	7
Գասարաց	»	9½
Վերջ	»	11

Այս կիւրակէ, 1/13 Յունվար, քաղաքիս Ս. Գէորգ և Գնարոս եկեղեցւոյ մէջ կարգացուեցաւ պատրիարքական անդրանիկ կոնդակն շարժառաւ և աւետարանի բանիւով, ի լուր և ի աչս ղժրադղաբար ժողովրդեան փոքրամասնութեան։

—Գահիրէի Հայոց բարեգործական ընկերութիւնն Կ. Պոլսոյ Ազգ. Ս. Փրկչեան հիւանդանոցի վերաշինութեան ինդաստ 1,000 ֆրանք զրկեցու բարի օրինակն ցուցած է։

—Ինչպէս կ'լսենք քաղաքիս Հայոց Բարեգործական ընկերութիւնն այս շաբաթու թատերական ներկայացում մի պիտի տայ, անձնուէր թատերասիրաց ձեռամբ, ազնկցութեամբ հրաշակաւոր դերասանուհի տիկին Սիրանուշի։

Ներկայացուեցաւ «ԾՆԵՐՈՒՆԻ ՏԱՍՆԱՊԵՏ» տաճկերէն լեզուաւ, ինչպէս նոսա խիստ ծիծաղաշարժ կատակերգութիւն մի՝ «ՀԱՄԵՍՏՈՒԹԵԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ»։

Յուսալի է որ ազնիւ Հայ Հասարակութիւնն պիտի բարեհաճի այս ձեռնարկն լիովին քաջալերել իւր ներկայութեամբ։

Մեր կողմանէ կատարեալ յաջողութիւն կ'մաղթենք թէ՝ ազգ ասասէր Ընչերասիրեան և թէ՝ Անձնուէր Թատերասիրաց պ. սասուլժան Խրիմեան։

—ԲէյՕղլուի Հայոց Եկեղեցւոյն Թեմական Առաջնորդ Գերշ. Սարգիսեան Աշիգիկիսպան 2000 Բուբլի նուիրած է Ս. Էջմիածնայ Տոնարին վերանորոգութեան։

ՄԱՀ

ՀԱՅ ԶՕՐԱՎԱՐ ԿՈՄՍ ԼՕՐԻՍ ՄԵԼԻՔՕՖԻ

Բուսիոյ Վեճաիաւ Զարի բանակին օգնական Զօրավար Կոմս Լորիս Մելիքօֆ կնքեց իւր մահկանացուն։

Այս գոյժն ի խոր սուգ կ'ճամակէ Համայն Հայութիւնն ու Բուսատան։

Հանգուցեալն իւր հիւանդութեանն յապաքինութիւն, Գաղղիոյ Նիս քաղաքն օդափոխութեան գացած ըլլալով, անդ վերջ կուտայ իւր բեղմնաւոր ու փառաւոր կենաց, ի 25 դեկտեմբերի 1888։

Ուղղափառութեան ճանդէսն սեղի ունեցաւ Դեկտ. 27 ին, ժողովրդեան խուռն բազմութեամբ ներկայութեամբ։

Աւուսաեան ժամը 9 էն սկսելով կրիմաչի ընտրած Էրատարակը եւ մօտակայ պողոտաներն լեցուած էին անազին բազմութեամբ, զոր ուսիկանութիւնն հազիւ կարող եղած էր զսպել։

Նիսի եւ Վիլֆրանշի պատակ զինուորներն, Էրամնաւ պատերազմական նախարարին, ներկայ կ'գտնուէին երիտասարդ Նեմանի դիակարգաւորութեամբ մարմնի հրապարակին, Մազարանի եւ Հալեվի փողոցներուն ու Անգղիացւոյ պարտէզի սեղանին վրայ, հանգուցեալին մատուցանելու համար իրենց զինուորական յարգանքն։

Ճեռոյ յաջորդաբար քաղաքը կ'հանին բոլոր երեւելիք Բուսական եւ օտարազգի գաղթականութեանց, ինչպէս նաեւ քաղաքական եւ զինուորական իշխանութիւնք։

Ժամ 10 ին դդեկլին թնդանոթն կ'սկսի յաջորդաբար երկու վայրկեանը մը անգամ թնդացնել տասն եւ մէկ հարւածներ։ Այս մշոյին թափորը կ'յառաջանայ առաջնորդութեամբ զօրավարներու զօրագնդերու, եւ բանակի զինուորական նուագածուայ, որք նուագելով յատուկ մարշ կ'նուագէին, յետոյ առաջին կարգի եւ պարզ դագաղակիր կառք մը որ բոլորովին ծածկուած էր պսակներու եւ ծաղկանց տակը, լծուած չորս ձիերէ եւ սուրճանդակներէ առաջնորդեալ։

Մ. տը Պաժուրն՝ Բուսական ընդհանուր Հիւպատոսն ի նիս, եւ այլ երեւելիք կ'վերցնէին ծածկոցին ծոպերն։

Հանգուցեալ Զօրավարին պատերազմական ձին կ'ոնեաւելի իւր սիրոյ դագաղն՝ սեւ շղարշով մը ծածկուած։

Հանգուցելոյն զաւակներն, որ առաւօտուն հասած էին Բուսիոյէն, գագաթը կը հետեւէին։

Ներկայիս մէջ կ'նշմարուէին բոլոր երեւելի քաղաքացիք, քաղաքական պաշտօնեայք եւ նիսի ու շրջակայից ամբողջ զօրապետք։

Ճուղարկաւորութեան հանդիսին անցքին վրայ բազմութիւնն խուռնած էր ամենայն յարգանաբ։

Այլ եւ այլ զօրագնդեր անցքին երկու կողմն գրաւած էին որոց դրօշակներն սեւ շղարշով ծածկուած կը ծածանէին։

Այս կերպով կազմակերպեալ սխուբ հանդէսն կ'ուղեւորի դէպի Բուսական գերեզմանատունն, ուր Հայ Զօրավար Լորիս Մելիքօֆի մարմինն առժամանակեայ կերպիւ պահուած է, մինչեւ ի Բուսիս փոխադրուիլն, ուր սեղի պիտի ունենայ իւր պաշտօնական յուղարկաւորութիւնն։

Հանեալ նամակն արտատպելով ԱՐՁԱԳԱՆՔԻ 48 թիւէն՝ կոչով Ազգայնոց կ. օգնող ընկերութեանց տ. շաղրտութիւնն էր հրաւիրեալ առ մեր Բաֆֆի ծանօթի իւր ժողովրդական արտաշարժ վէպերուն, այժմ իւր մահուանէ վերջ այրի մը և որբեր թողած է իւր եւսն բազմաչարչար վիճակի մէջ։ ՆԵՂՈՍի խմբագրութիւնն յանձնապես վստահ է որ սոյն տարաբաղդ ընտանիքն ոչ միայն Ռուսահայոց այլ և վայելէ ընդհանուր Հայ ազգի ձեռնտուութիւնն. քանի որ Բաֆֆի ընդհանուր Ազգի ժողովրդական վիպասանն եղած է։ Այն տանն միայն մեր դրական ասպարէզի վրայ պիտի բատարանայ արժանաւոր դրոշներու թիւն երբ դիտանք զարձնապես օգնել անոնց, անոնց որք այնչափ մեծ ազդեցութիւն ունին մեր բարքի վրայ։

«Հաշտարար դատաւորի կարգադրութեամբ և թախանձանք ընդունելով հանգուցեալ Բաֆֆիի ազգուոյ վրայ խնամատարել լինելու ծանր պաշտօնը, այրի Աննա Մելիք-Յակոբեանի հետ, ես նախ և առաջ կամեցայ ծանօթանալ երջանկայիշատակ վիպասանի նիւթական վիճակին. այս պատճառով մանրամասն վերաշինութեան ենթարկեցի նորա եկից և մտից մատեանները, նորա յիշատակարանները և թղթերը։ Ցաւ է ինձ յայտնել ի լուր հասարակութեան, որ հայերիս առնուազն ազգային վիպագրողի նիւթական դրութիւնը սչատածիցս աւելի սնանկ երեւեցաւ։ Բացի տպագրիչներից, որոնք մնում են այս կամ այն գրքավաճառի և այս կամ այն մասնաւոր մարդու վրայ, որոնց հանգուցեալը իւր գրքերը տուել էր կամիսով վաճառելու, ուրիշ օգնիչ չը կար Ռուսի ոչգրացեալ Մելիք-Յակոբեան երկու մատաղ զաւակների և նորա այրի մը ապրուստի միակ ապրիւրը լինելու է այսու հետեւ հանգուցեալի գրաւոր երկասիրութիւնների վաճառումից գոյացած արդիւնքն և բարեմիտ մարդկանց ինքնայօժար ձեռնտուութիւնը։ Այս պատճառով ես յոյս ունիմ, որ այն յարգելի անձինք, որոնք գնուած քաղաքներում յաճնուած են եղած, Բաֆֆիի կենդանի ժամանակ տարածել նորա գրքերը և որոնց անունները իրանց ստացած գրքերի քանակութեան հետ ցուցակագրուած են հանգուցեալի ձեռքով, կը շտապեն որ առաջ մոքրել հաշիւները և կը վերադարձնեն մեզ անվնաս մնացած գրքերն և վաճառուածների արժէքը ամենակարճ ժամանակում։ Պարաք եմ համարում յայտարարել նաեւ, որ այսու հետեւ Բաֆֆիի գրքերի պահեստը լինելու է Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում, որին և կարող են դիմել բոլոր գրատարական

ԹԵՐԹՕՆ ՆԵՂՈՍԻ

)(2)(

ՀԱԶԱՐ ԵՒ ՄԷԿ ԵՐԱԶՆԵՐ

Գրեց ՇԱՀԷՆ

Ա.

ԱՊԱՐԱՆԵՐ. — ԽՐՃԻՔ. — ԳԻՇՈՒԹԻՒՆ

Կաղանդ է ... Հրաւիրուած էի։ Ապարանք մ'էր այն ճոխ ու փարթամ։

Գիշեր է և ձմեռ լոյսերու մէջ ողողուած հսկայ սրահներն ու սենեակներ. անդուսկ վարագոյրներ կ'ծածկեն պատուհանները. գրանց վերայ կախուած կան թանկագին լաստներ. սրահներու յատակն ուշադրանակ գորգեր ոսկուած են. կանոնաւորապէս բաշխուած կան երբեմն ճաշակաւոր յօրինուած աքանչելի բազմոցներն ու թիկնաթոռներ, որոց վերայ ասրաձուոց փափկամարմի էակք կնստաւ չափ ընկղմուած են կարմրորակ թաւիշներուն խորը։ Եւ այս ամենայն կը ցոլան աւազանի կախուած ոսկեձուռակ բազմաբազուկներ ու բիւրեղեայ զարդեր կրող ջահերու, և ոսկեայ վերայ հաստատուած հմայիչ կանդելներու լուսոյն ներքեւ։

Ուրշա՛մ այլ ուժգնագոյն մենչէ քամին յարատեւաբար, ուրշա՛մ այլ ձիւն ասատակէս թիկն երկնային սև կամարին, և ծածկէ զաշտերն ու լեռներ, մեռելութիւն բուրէ աշխարհ ....։

—Ինչ փոյթ զոր արթի է ապարանքն, փաւեակներու պատուհանի կապերով կապուած փառաւորներն նեղոյշնակ կերպիւ ջերմութիւն կ'ընծայեն, և նոյնը մեռաքով, շրջապէսա կրող սիկնոյք կը ծարեն ցուրան ու սառ, փողքն ու քամին, որք կ'ծեծեն ապարանքս արտաքին երեսն անդադար, չ'կարելով մտնել ի ներքս։

Դաշնակն մերթ կ'գտայ ու մերթ հանդարտիկ կ'գեղեցիկ Գիթ օֆրնի զեղանաղ եղանակներն՝ փափկիկ մատանց տակ կուտին. և այն նուագաց հետ կը խառնուի քաղցրահնչուն ձայն դաշնակուհւոյն, որ մեն մի եղէգին թեթեւ շարժումն մը կատան կուրծքն կիսով չափ ծածկուլ նրբութեամբ շաղուին ....։

Ընթրեցաց զանգակն կ'հնչէ, ահա, հրաւիրելով ի ճաշարան, ուր նոր է սեղանն։

Սեղան մ'էր կայ հոն ծաղկեփունջերով զարդարուն, կարդ կ'զդ շարուած են պնակներ պատկերներով, շարարեղէններով լի. ոսկեայ պատուաքաղներ ու զանակներ, Շամբանեան դինի, Սոխ բրաքանի պատուական գաւաթներ, Սիկիլիոյ արքայախնձոր, Մալակայի նուռ, Գալիոյ դեղձ, Թուրքիոյ սրմանդ, Գալիպոլեան կրպակաց նարինջ, Բրիսանիոյ պանիր, Սիսիլիոյ անուշարարայր կարագ ... ոչ մի մկրան բանի, ոչ մի գինի թանի. — բազմատեսակ կերակրներ կուգան ու կ'երթան, անուշեղեներ կ'յաջորդեն, անթիւ անհամար ... ընթրիքն ալ աւարտեցաւ, սրահն կ'ելնենք. կանոնի սրահ մը. —Գարե՞նք ... կը գնեն ձայներ.— Գարե՞նք։

Երջանկութեան մէջ ողողուած, յափշտակուած. կեանք գիշեր է հնչած։

Հրաւիրեալք մի ըստ միոջէ կ'մեկնին Նոր ասարոյ ասթիւ երջանկութիւն մաղթելով միմեանց։

Կ'մեկնիմ և ես։

* * *

Յուրտեն պատասարաւելու հանար խաչոր վերարկու մը մէջ փաթաթուած արագ կ'ընթանայի գէպի սենեակս։ Քաղաքն ամբողջ նատաղներու, ծիծաղանաց, խնդի, ու զուարթութեան ազմուկներուն մէջ կ'խեղդուէր։

Կ'ընթանայի երջանկութեան մէկ քանի ժամերն հաշուելով, մտաղրաղ, երբ ս շարարութիւնս գրաւեց ճամբուս վրայ անակ մը խարխլած. ախտաւոր էր նա, մերթ ուցած. թշուառութիւնը իւր աչքերը գոյները գրաշնած էր ապշ խեղճուկ խրճիթին արտաքին երեսն. փոքրիկ լուսամուտ մի ունէր նա, որ փեղկերն խորտակուած հին և ապակւոյ տեղ թուղթ էր փակցուած. տախտակամածն ուրիշ ուրիշ-ջարդարուած։ — Քայլերս յամրացան յանկարծ ի տեսել այս խեղճերիտասարդին։ Թղթէ լուսամտին մոտեցայ յուշիկ, և սկսայ գրտել ներսը թղթին պատուած մէկ ծակին։

Տեսարան մը պարզուեցաւ աչացս առջեւ. հակապատակերը երանութեան ապարանքին։

Գիմանամանձրի մը վերայ անկուած մամ մը ապրա կ'լուսաստրէր անշաւք խաւցն և երեք գէմքեր կ'երեւէին հոն, մահամոլ գեղնութեամբ. այր, կին և կոյս։

Երեքն ալ նիհար, երեքն ալ ախտաւր, երեքն ի միասին թշուառութեան, յուսահատութեան պատկեր մը կ'ներկայացունէին։

Այրն, որ հայր էր, հոգեր. նստած գե-

և օտարերկրեայ հայ գրավաճառները և մասնաւոր անձինք։ Համառօտն այն պայմանների, որ տեղի է ունեցել խնամակալներու և Կենտրոնական գրավաճառանոցի մէջ, բոլոր գրավաճառները և որոշ քանակութեամբ գնող մասնաւոր անձինք հաւատարակ է քան տակաւ գիշո մն պիտի ստանան ազգային գներից։

Ցոյս ունեմ, որ այն բոլոր անձինք, որոնց համար թանգ է եղած հանդուցեալ վիպասանի անունը, որոնք յարգած են նորա գրութիւնները, որոնք գին են տրուած նորա երկասիրութիւններին, նորա գաղափարներին, նորա ձգտումներին,— չեն խնայիր իրանց ջանքերը և ա՛ն կերպ կ'աշխատին տարածել նորա գրքերի մեացորդները, որով թէ իրանց բարեկամական պարտականութիւնը կատարած կը լինին զէպի հանգուցեալը և թէ, միևնոյն ժամանակ, նպաստաւոր կը լինին հայ հեղինակի որբացեալ զաւակներին և այրեացեալ մուսային»։

ՊԱՆԴԽՏԻՆ ԿԱՂԱՆԴԸ

Լի՛ց օղին, եղբա՛յր, լի՛ց այդ բաժակին մէջ,
Սեւ կսկիծներուս կամիմ տալ մի վերջ։
Տարի մ'ալ անցաւ, տարի մ'ալ տխուր.
Կարօ՞տ՝ հայրենեաց պայծառ երկնքի,
Կարօ՞տ այն ջրին, հովտին ծաղկափիւռ՝
Բա՛ւ ախուվախով օրերս անցուցի։

Լի՛ց օղին, եղբա՛յր, լի՛ց.
Խեղճ յոգնած գլխիս մերթ քարն առի բարձ,
Օտար աստեղոյ հետ անքուն հսկեցի,
Ո՛հ. հազիւ գտայ փշուր մի ջոր հաց,
Ի՛ արիւն արցունքով բա՛ւ զայն թրջեցի։

Լի՛ց օղին, եղբա՛յր, լի՛ց.
Հայրենի յարկիս պատկերն ամայի,
Տժգունած դէմքեր սիրելիներուս,
Եւ նոյա աչկունք արցունքներով լի՝
Բա՛ւ պլպլացին հանդէպ իմ հոգւոյս։

Լի՛ց օղին, եղբա՛յր, լի՛ց.
Բա՛ւ իմ Արտակիս նորածիլ շրթունք՝
«Ո՞ւր երթաս հայրիկ» ինձ մրմնջեցին.
Բա՛ւ սրտիս հատոր Աշխէնիս աչկունք՝
Պանդուխտ քայլիս տակ արցունք սրսիռեցին։

Լի՛ց օղին, եղբա՛յր, լի՛ց.
Եւ Թո՛ղ մոգական ձեռք մ'այդ սրգաւէտ
Պատկերն սքօղէ, երազն այն մթին,
Թո՛ղ խուսափի բիւր յիշատակաց հետ.
Բա՛ւ նոքա հոգիս հալումաշ ըրին։

Լի՛ց օղին, եղբա՛յր, լի՛ց.
Բայց ի զո՞ւր ... տեսնեմ երկինքն իմ պայծառ,
Որ գրգռուէ Մասեաց վեհաշուք ճակատ.
Քաջաց արիւնէն ծլած վառ ի վառ՝
Ո՛ւ, Շաւարշանայ աեմսեմ ծիլն ու վարդ։

Լի՛ց օղին, եղբա՛յր, լի՛ց.
Բայց ի զո՞ւր ... ո՞ այդ հրեշտակ անմեղ,
Որ աչքերն ժպիտ բնա՛ւ չը տեսան.
Եւ որոյ վարդէ շրթներն սիրագեղ՝
Հօր մ'ոամքոյրէ գուրկ՝ հառաչել ուսան։

Լի՛ց օղին, եղբա՛յր, լի՛ց.
Բայց ի զո՞ւր ... ո՞վ է դա՝ սգաւոր կին,
Վարդերն են թօշնած շիկնող այտերուն.
Գրկաբաց դիտէ պանդխտիս ուղին,
Աշխէ՞նս է՝ որուն սիրան հոսէ արիւն..

Լի՛ց օղին, եղբայր, լի՛ց այդ բաժակին մէջ,
Սեւ կսկիծներուս տուր, Աստուած մի վերջ։
Թէ նոր տարին ալ բաժինս է եղել
Օտար երկնի տակ նոր արցունք ու խոց,
Թող Ղարիպ Տէրտէրն պատրաստուի ասել
Թշուառ պանդխտիս իւր տխո՞ւր հոգւոյ ...։

Կ. ԽՕՍԲԱՆՑ

1 Յունվար 1889.
Յէդեքսանդրիա

ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ

Բարձր Խորհրդ, երկուշաբթի գիշեր փառաւոր հացկերոյթ մը տուաւ, ի պատիւ Գերմանական ընդհանուր հիւպատոս Մ. տը Պաօէռի։

—Վաղեմ. Տիգրան փաշա Ապրօ արտօնութեամբ յԵւրոպա մեկնեցաւ երկուշաբթի օրն։

—Մասղէնի Յեղասպետն՝ Շէյխ Քիլանի պէյ էլ Մասրի, սպաննուած է անցեալ երեքշաբթի, 8 Յունվար։

Ահա մի քանի մանրամասնութիւնք սոյն սպանման վերաբերեալ։

Նոյն օրն Շէյխը վեր. Հիւսէին փաշա Հիւսնիի Սպասիէն կը վերադառնար ի Զարրա, իւր վեց սպասաւորաց հետ։ Ցանկարծ երկու Պէտէվիներ կ'ներկայանան իրեն, որոցմէ մին կ'հարցնէ.—Ուր է իմ Համան եղբայրս։

Շէյխը կ'պատասխանէ.—Բանտն է։

Խօսակից Պէտէվին, գիտնալով որ Քիլանի պէյ իւր եղբօր դէմ վարուած է՝ բաղմահարս ածեանն կ'հանէ գրպանէն և Շէյխին վրայ կրակ կ'ընէ, որ կուրծքէն վիրաւորուելով կ'ինկնայ։

Մարդասպանն անմիջապէս ձիուն վրայ կ'ցատքէ և կ'փախչի։ Սպասաւորներն թէպէտ կ'հալածեն զայն, սակայն անօգուտ կը լինի։

Վէքիլը և ոստիկանութեան հրամանատարն կ'հասնին ի պահուն, գիակին գլուխը ուր կ'գտնեն Պէտէվիներու խուռն բազմութիւն մը, կսրի յուզեալ, զի շատ սիրելի դարձած էր Շէյխն գիւղին մէջ, իւր ժողովրդասիրութեամբ։

Վէքիլն հրամայեց բաղաքացիներուն, սակայն ընդհանուր յուզմունք կ'տիրէ շրջակայքն։

Վերջէն առնուած լրոց համաձայն սոյն սպանութեան ոճրով ամբաստանեալ Մուհամմէտ Սալմա և իւր եղբայրն Գատէր Ալվա ձերբակալուած են Մինիէի ոստիկանութեան ձեռամբ։

—Կիրակի առաւօտ Աղեքսանդրիոյ նաւահանգիստը մտան Գերմանական չորս մարտանաւեր, այք ընդամենն 1700 հոգի կ'կրէին։

Այս նաւատորմիղին ի պատիւ արձակուած թնդանօթի հարուածներու թիւն 153 ի բարձրացաւ, որ քաղաքիս բնակչաց շատերուն զարմանք պատճառեց, գործին էութեան տեղեակ չ'լինելով։

Սոյն նաւատորմին հրամանատար Ծովապետն Հէլման այցելութեան ելաւ քաղաքիս Կառավարիչ Վսեմ. Օսման–Օրֆի փաշայի, և տեղւոյս Գերմանական Հիւպատոսին։

Ծովապետն երկուշաբթի օր ի Գահիրէ մեկնեցաւ, ուր երեք օր մնալէ վերջն հինգշաբթի պիտի վերադառնայ, և հետեւեալ օրն իւր նաւատորմով քաղաքիս մեկնելով պիտի ուղեւորի ի Մալթա։

—Նորին Բարձրութիւն Իշխանուհի Գատրն Էֆէնտի, մեծ մայր Բարձրապատիւ Խեդիվի, շաբաթ առաւօտ Գահիրէէն մեկնած է վերին Եգիպտոս երթալու համար։

Ն. Բ. Գատրն Էֆէնտի Խեդիվական Զիյարէյ Նիյ տահա պէյով կ'ճամբորդէ։

—Ի Սուաքիմ ցեղասպանութիւններն խաղաղութեան կ'փախչին։

Արաբներն աղտաւոր արջառներ կ'տանին ի վաճառ։

—Մ. տը Լէսէպ, և Բանամայի Ջրանցքին տնօրինութիւնն պանքայի մը հետ կապակցութիւն մը ունեցած են 60 միլիոն Ֆրանքի նոր արժեթղթեր հանելու։

ՕԴԻՆ ՄԷՋԷՆ ՆՈՐՈՒՆ ՎԵՐԱԴԱՐՁԱՆՔ

(Շարունակութիւն Տես թիւ Ա.)

Գիշեր էր, տունը մէջ բայց ինձմէ ամէն մարդ ի քուն մնած էր. ես միայն կայի արթուն կամ աւելի ճիշդն անքուն, ինքնիրենս կը մտածէի՝ ճար մը, նպատակս հասնել կարենալու, որոշած էի. պատիւս ալ այնպէս կը պահանջէր։ անձնասիրութիւնս ալ նոյնը կը պահանջէր մանաւանդ որ շատ մարդիկ համոզուած էին որ եղծէ Սրբիլեքօս գլխուն մէջ բան մը դնէ, անպատճառ կը կատարէ. ո՛հ ինչ ապուր ուտելու համար այս գաղափարը կապուել տալու տեղն տուած էի ...։

Եղբայր, նպատակիս համար զոհողութիւն ընելն բան մը չէր ինձ համար, եթէ խնդիրը մէկ քանի ապտակ կամ մէկ քանի կիս ուտելով վերջանար. բայց ես ապուշի պէս առանց մտածելու մեռնիլ ուխտէր էի, բան մը որ իմ կարողութենէս վեր է եղեր ... իրը թէ խօսք տուած ըլլայի թէ կիրակի օր մը ի քէհատխանէ քանի մը ամսան մտածունով և ապաթիա ներով դառնուկ մը պիտի ճաշակէի, վրայէդ ալ քանի մը դաւաթ գինի կոնծելով սեր և մէկ քանի անդամ ալ կեցցէ պօռալով ամէն բան պիտի լրանար .. բայց ո՛վ զարմանալի ... ահա գիտուածը ամէն բան պարզեց և վերջացուց։

Արդեօք կը ներե՞ն սիրելի ընթերցողներս որ ես ալ փիչ մը բանաստեղծական կերպով նկարագրեմ այն դիպուածը որ զիս պատուաւոր կերպով հանեց գործին մէջէն, այսինքն առանց դառն և որտաճմլիկ տեսարանաց, հիւանդութեանց և չարչարանաց մատնուելու առժամանակեայ կերպով կնքեցի իմ մահկանացուս ...։

Այսպէսով թէև աւելի մը պիտի ունենամ գրածս երկնցնելու և շատ բան գրած երևալու, և թէ աղնիւ ընթերցողներս ալ նոյն միջոցին սիկառ մը ծխելու ժամանակ վատնելով պատեհութիւն պիտի ունենան գործին աւելի հեռաքրքրական կողմերը պտտելու համար պատրաստուիլ։

Օն ուրեմն ո՛վ Հիւկօ, ո՛վ Շիլլեր, ո՛վ Զէզա՛ր ո՛վ Կարթագինէ՛ս. ո՛վ Նէոպոլէո՛ն, ո՛վ Թապուքօլօրոպուսիանոսիո՛ն .. ո՛վ պապել մանտէ՛պ ... ո՛վ բարձրաբերձ լերինք մասեա՛ց ... ո՛վ ... ո՛վ ... ո՛վ ... ո՛վ նուիրական և հոյակապ անուանք որ շտեմարանքդ էք քերթողաց և գրամագլուխ բանաստեղծից. և սուրգիչ պարապ պրաք պրակ թղթոց և պարզերեսիչ դէպքոցականաց համայնից. ծն և ինձ հասէք և վուրթացէք ի յոգնութիւն. լեռ՛ք սրիչ և տո՛ք թռիչ, առնելով գրաւիչ զիմ նործիլ գրիչ ... որպէսզի ի կարդալ ընթերցողաց գկարկառնապատրաստ զբանահիւսութիւնս իմ, ամենայն պարբերութիւնք գլխացաւապատճառք որ ինոսա, հմտալից երեւեցին և հրահանգիչ, զի ամենայն ունայնաբանութիւնք, բա՛նք խորհրդաւորք խմացին և ամենայն անպատակ և անտեղի շարադասութիւնք նոցին, խորին նպատակա-յայտնեցին և ճաշակաւոր ...։

Ողջ էք և ողջ կաշարուք, ամէն։

Կ. Պոլսոյ Ղ. ... համբաւաւոր թաղին մէջ ծովին մակերևոյթէն 42 մէթրօ յածութեամբ երկու կարի նիհար մարդոց քովէ քով քշտուրտուելով անցնելու ընդարձակութեամբ լայն փողոց մը կար, այդ փողոցին երկու կողմերը ամէն ճաշակի յարմար բայց իրարու բոլորովին անյարմար Ն.ոյ նահապետին օրէն մինչև մեր օրերը շինուած տուներ բարձրացած էին. ահա այդ տուներէն մին որ Բիզակ աշտարակի դիրքն ստացած էր, ծառայականիս կը պատկանէր. կը պատկանէր կ'ըսեմ նէ այդ տունը իմ ստացուածքն լինելու պատիւն չունէր, այլ ես այդ հրաշակերտ տունին մէկ սենեակի նմանը կը վարձէի. այդ սենեակը որ վերոյիշեալ փողոցին վրայ կը նայէր, Հէրմէս թագաւորի ճգնարանին պէս Սրբուս ճառագայթները վայելելու բաղդէն զուրկ էր. հետեւաբար ամէն երեկոյ ձմեռը ժամը տասնիսկան 8 ին և ամառը 11 ին ճրագ վարելու հարկին մէջ կը գտնուէինք. բայց եթէ մխիթարութեան արժանի բան մը ունէինք այդ տունին մէջ, այն ալ էր թէ, դիշերները մոռադրած ժամանակիս արթննալու համար ո՛չ ձայն տուողի պէտք ունէինք և ոչ ալ լարուած ժամացոյցի զարթնեցուցիչ անտանելի շանթաթափն. զի այն յաղթանդամ մուկերն որ առանց մասնաւոր ծակերու մէջ պահուելու արձակ համարձակ կը ճէմէին հանդարտօրէն ի սենեկիս և որոնք ոչ թշթէ կանգնէին և ոչ ռշթէ և որոնք կըսեմ 12 աւելի ամէն կարգի կատուներ ի փախուստ դարձուցած էին, արդէն շարունակելի դնոյ ժամեր ընդհատած չէին եղիլեր. և ահա այս բացառիկ պատճառաւ սդիպեալ էինք միշտ վառ պահել մեր կանթեղիկը։

տինը, ձեռքերը ծնկայն կապած, ճակատը խոնարհեցուցած, անկենդան աչքերն խաչոր խաչոր բացած իւր աղջկան կ'նայէր ...։

Կինն, որ մա՛յր էր, խե՛ղճ մայր. կը լսէր մէկ ձեռքին կրթնցուցած գլխի առատաղը պիշ ուղղած էր հայեացքն, դողցեալ դիմաթիւն կ'խնդրէր երկինքէն, որ կարած առատաղով մը բաժնուած էր իրմէն ...։

Կոյսը, հէ՛գ աղջիկ, աչքերն փոքրիկ ձեռացն մէջ ծածկած կ'արտասուէր անդադար և կ'աշխատէր պահել իւր որոնին մէջ հեծկլտանքն, որ կ'այրէր զինքն. հէ՛գ կոյս դեռատի ...։

Զայն չ'կայ, լուութիւնը կը տիրա գեակ՝ շարժում չ'կայ, մեռելութիւն կ'իյնայ հոն։

Հինգ վայրկեան կ'սպասեմ, չիսթած, պլլայլած։

Եւ ահա, հառաչանաց խեղդուկ ու խուլ հոսանք մը կ'անցնի, դողցնելով սենեակն, թնդելով հողիս, և արտասուաց կաթիլ մը գողնալով աչքիս. — կոյսն է այն, որ ա՛հ ... ը որոնն բոլոր խաւերը ճեղքելով դժուարաւ կ'մեկնի յարտաքս թարշամած շրթներէն ...։

Հայրը, որ դողցեալ արձանացած կ'մնար, «Ի՞նչ ունիս, աղջի՛կս» կ'գոչէ.

—Ոչի՛նչ. հայր, ոչի՛նչ. ա՛հ, ո՛չինչ .. բայց չ'ե՞ս լսեր, չ'ե՞ս լսեր քաղաքացւոց երջանկութեան աղմուկն ... ա՛հ ...։

—Մի՛, աղջի՛կս, մի՛ լար, կ'պատասխանէ հայրն դողալով ձայնիւ. Աստուած կը գթայ անշուշտ մեր վերայ, կ'ազատի մեզ։

—Յուրա է. հա՛յր, կ'մեռի՛մ, կ'սառի՛մ, և մէկը չ'կա՛յ որ օգնութեան ձեռք կարկառէ մեզ ...։

Աղ. ես չ'եմ կարող զսպել ինքզինքս. ձեռքս դրպանս կ'դնեմ, և նոյն օրուան ինձ եղած նուէրն, չեմ յիշեր որչա՛փ, ամբողջապէս ափիս մէջ կ'առնում ու կ'սկսիմ պօռալ.«բացէ՛ք դուռը, բացէ՛ք դուռը, բա՛՛՛։

—Սակայն այս ի՞նչ. անկողնոյս մէջն եմ.. խաւար է սենեակս ...։

Աղուս ձայն մը տակաւին կ'հնչէ ականջիս. «Յուրա է, հա՛յր, կ'մեռի՛մ, կ'սառի՛մ. և մէկը չ'կայ որ օգնութեան ձեռք կարկառէ մեզ ...»։

(Շարունակելի)

Ենթադրական հաշուով կէս դիշերն անցած ըլլալու էր իմացուց մեր կանթեղին իր վերջին կածկլուրները, և ես պարտաւորեալ եղեալ և դարանը բանալով լոյս վերակենդանացնելու աճապարել զի անքուն ժամանակս անցուցանելու պէտք ունէի. դարանը բանալով աչքս հանդիպեցան մի քանի կոր դիրքեր, լրագրեր և տեսարաններ որոնք մէկ անկիւն նետուած էին իբր անօգուտ իրեր . . . բայց որու մարդն կ'անցնէր թէ այդ անօգուտ կարծուած իրերը, օր մը իմ ապառաւելեանս և նպատակս պիտի նպաստէին։

Միտքս փոխեցի և փոխանակ կանթեղիս լուսաւորելու, ճրագս վառեցի և ժամանակ անցուցանելու համար ըլլալ դարանէս ինքզինքս կամայ անկամայ աչքէ անցնելու կամ կարդալու այդ դիրքերը։

Առաջին տեսարանը որ ձեռք առի էր ԺԻՒԼ ՎԷՌՆԻ Յերկրի ի Լուսին ճամբորդութիւնը։

Բաւական հետաքրքրութեամբ այդ տեսարանը կարդալէս վերջը, մէկէն լոյս մը ծագեցաւ մտքիս մէջ, և զոչեցի ինքնիրենս. Ինչ . . . միթէ դիւրութիւն կայ երկրէ ի լուսին ճամբորդելու և ես ինչու ուրիշ միջոցներու դիմելու տխրութիւն. ես ալ այդ միջոցաւ յոգս կը վերանամ առժամանակեայ կերպով աշխարհի համար մեռնելով մինչև ցլուսին խելացառակիս դրած զարմանաժամին։

[Շարունակելի]

ԱՆԿԵՂԾ ՍԻՐՈՂՆԵՐ

ՏԷՐ ՊԱՊԱՆ՝ որ շատ կը սիրէ իր այն ծառերը, որոնք բազմաճոյղ բնութիւնք մը կը կազմեն, ալէոյն ալէոյն կ'ամուսնանան, ամէն տարի ժամանակին կը ծնին և իրարու հետ յաջողագարդ կը մեռնին։

Ո՜հ որքան աւելի սիրուն պիտի ըլլար մեր Տէր պապան, եթէ բարեբաղդարար իրեն ծաղիկները Եղիսաբեթի աշխարհներուն պէս տարին երկու անգամ ծնէին և շատ անգամ ալ երկարեակ կամ քառարեակ։

—ՓՓԻՇԿԸ՝ որ շատ կը սիրէ իր այն յամախոշտները, որոնք բաւական բարեկեցիկ վիճակի տէր են, որոնք բժշկին և բժշկութեան յարգը ճանչնալու առաքնութեան դասակարգուած են, որոնք ամբողջ կեանքը չեն սիրեր հակառակ բժիշկներու սիրոյն, որոնք ամէն ծերազարեւութեան իրեն սէնք կունենան, որք հիւանդ կը ծնին և շատ կասկին առանց մեռնելու։

Ո՜հ որքան սիրուն պիտի ըլլար մեր Բժիշկն եթէ մեր ազգն ալ Եւրոպացի ազգաց նման ամբողջովին լուսաւորեալ ըլլար և քիթին վրայ ճանճ մը նստած տեսն անգամ փոխանակ քշելու, ուղղակի մեր Բժիշկ պարոնին դիմեր . . . .։

—ԼՈԱԳՐԱՊԵՏԸ՝ որ շատ կը սիրէ իր ամ՛ն բաժանորդները, որոնք կանխիկ կը վճարեն. շատ մը ազգասիրէ դպրոցներու մէկ մէկ օրինակ թերթ կը նուիրեն, և երբեմն կարեւոր լենդերներ կը յայտնեն՝ նեթ և կլորիկ դուռնոր մը մուտակարարելով իր լրագրին։

Ո՜հ որքան սիրուն պիտի ըլլար մեր Լրագրագրեալը, եթէ իր ազգը ամբողջ ընթերցասէր ըլլար և իր բաժանորդաց թիւը դանէ 400ը անցնէր . . . .։

—ԵՐԻՏԱՍԱՐԴ ԼՅԵՆՏԻՆ՝ որ խենդի մը պէս կը սիրէ իր մանկամարդ կինը, որուն դեռ անցեալ տարի էր կէս յօրելեանը կատարեցին. կը գուրգուրայ անոր վրայ կը դաղայ դիմացը, կը նախանձի դեռ նոր սախատակներուն անգամ թէ ինչու բարեբաղդութիւն կունենան նորա քովը պտտելու անոնց ըլլալու. մէկ խօսքով բարդասէր ու նիւթասէր դերին եղած էր նորա . . . .։

Ո՜հ, որքան տաւել սիրոյ պիտի ըլլար մեր Լիֆլենտին և բարեբաղդ, եթէ օրէնքն ներէր իրեն քանի մը հատ ունենալ այդ մանկամարդ կիներէն և կարդաւ տալնուն համար ալ դատարան ըլլար և կամ մեռնէր։

Լիմիտ և մեռանիմ բայերը թէև չեզաք են, բայց այս պարբերութեան մէջ ազատ են և իրաւունք ունին զանոնք անցողական չենալու և այնպէս կարդալու։

—ՉԱՐԵՆՏԻՆ ԼԻԹԻՆ որ՝ շատ կը սիրէ իր հայրը, որ՝ ոսկի կը գիրէ և կապրի մինչև որ ինք չափահաս ըլլայ և անկէ վերջը տանց աշխարհային ուրիշ մեղքեր գործելու Աստուծոյ տրքայութեանը կ'արժանանայ իմաց վիշտ և իմաստ հանգիստով և թաթխելով իր միակ ժառանգորդ՝ և բարեպատուղ որդին։

Ո՜հ որքան երջանկագոյն պիտի հանուիր մեր Բարեպատուին իր անձը եթէ վերոյիշեալ հօր նման մէկ քանի պապաՁերու զաւակ ըլլար։

—ՄԵՆՈՒՏՈՒՆԸ՝ որ շատ կը սիրէ իր այն բարեկամները, որոնք Աղքատ Գաղտասին ցեղէն չեն, այսինքն առանց փոխարինութեան առակ չեն մատար. որոնք սովորած են ապային ամէն բաներ՝ եկիր Լեգեոնիա պատասխանելու և նորա ամէն հաճոյից կատարման կոչի և պատրաստ մնալու։

Ո՜հ, որքան տաւել պիտի սիրէր մեր Մեծատունը, եթէ երբեմն չ'պատահէին ապերախտ մարդիկ, որոնք անիրաւօրէն կ'ելլեն և կը յանդգնին այնոր եղբաւ հակառակ բարի և աստուածասիրդ կանոց մեր ազգասէր—սիրտ Մեծատունին՝ թէ օրը 24 ժամ է։

—ԼԱՐԹԱՊՆՏԸ՝ որ շատ կը սիրէր իր ամէն աշակերտները, որոնք կոչանդին ամիս մը մնացած կարծես վրանին հոգին Աստուծոյ կ'ելլեն և ամէնքն մէկէն թեւոք և ժրաջան կ'երևային մեր Վարժարանին աչքին առ հատուկ և դրատեղանին վրայ փոխանակ Ֆալաքանի և տեղինակի պարկենք և օրացոյցք մէկդիկ կոչնաւորէին։

Բայց մեր Վարժարանի յօրէ անտի երբ կոչանդի պարկեշի ստորութիւնը վերցաւ, իր տէրը աշակերտներուն առանձն վերցնելով՝ այն հոգ արարածներուն առնը կրեց, որոնք կը բարի համին և շնոհ կընեն մեր Վարժարանին ամառանը ժամանակին ապրիլ . . . .։

Ո՜հ, որքան յանձնաս պիտի սիրէր մեր վարժարանն եթէ դանուէր բարեբաղդաբար իրեն համար սիրելու առարկայ մը։

—ՊԱՐՈՆԻՆ՝ . ո՜հ նա ալ նոյն բանաւոր պատճառաւ դաղրած է այլ ևս սիրելի։

ՎԱՐՊԵՏՆԵՐՈՒ ՏՕՐՊԱԿԷՆ

Անցեալները երկու ընկեր հրատարակէն կ'անցնէին պատերուն վրայ թատերական ապրատարութիւն մը փակցուած էր, յորմէ կիմացուէր թէ նոյն գիշերը խաղ մը պիտի ներկայացնէին ի Բօլիքեամա՝ որուն անունը էր «ՍԻՆԱ և ՊԱՏՈՒՀԱՆ»։

Ընկերոջը մին հարցուց հետաքրքրութեամբ միւսին.

—Գիտէ՞ք որպէսզի բարեկամ ի՞նչպէս խաղ է այս։

—Ամառուան պատասխանեց ընկերը. չէ՞ք տեսներ. խաղ մը որ ծանուցումը իր վերան է.

Սկսաւ՝ դէր հեղինակը գործած է գրելով այս խաղը.

Խմ պատուհասը՝ կրելու հարկին մէջ պիտի գտնուի ժողովուրդը մեռիկ ընելով։

Պարո՛ն խմբագիր, հարցուց բարեկամս մէկը անցեալ օր. ձեր Ցայտարարութեան մէջ ըսած էիք թէ, թերթիդ շարունակութիւնը ապահովաբար է. որպէսզի՞ ինչպէս կրնայ իմացնել թէ ինչ՞ տեսակ ապահովութիւն է այս։

—Եթէ մեր առաջին թիւը ուշի ուշով կարդացած ըլլայիք՝ ըսի. ան տեղ բացատրուած թիւնը պիտի գտնայիք։

Մեր ՇԱՀԷՆԸ հարար և մէկ անգամ պիտի երարէ. և որովհետև շարաթը մէկ անգամ պիտի երարէ, ըսելէ թէ այս հաշուով առնուազն 20 տարի երարելու պիտի սարկուի. ես ալ իմ կողմանէ 3 տարի տակաւ բարդած կամ երարած եմ սեղանաւորական իմաստանքատար հաշուով, ահա քեզի 23 տարի. 23 տարիին վերջնալ ըստ նոր մօտայ՝ մեր դարձուածութեան 25երորդ տարին՝ այնինչն քառորդ յօրելեանիս պիտի կատարեն և նոր այժ մը պիտի տանեմ, եթէ դժբաղդաբար այդ թատրանէն առաջ Տեր պապան կարգերնիս չկատարէ, ահա քեզի կատարեալ ապահովութիւն տուկ աւելի ի՞նչ կ'ուզես։

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

Համեստ բնուանիքի զաւակ Հայ բարեկիրթ Օրիորդ մը՝ որ ի Կ. Պոլիս Բերայի Գերմանական դպրոցին շրջանաւարտ եղած է, գիտէ ևս կը տարբերցնէ ԲԻԱԵՕ. կը դնատաբոսի Հայերէն, Գարպիերէն ևս Տաձկերէն, կը խօսի Յունարէն ևս Իտալերէն յաջողագոյն. կը փափաքի բնուանեալ տեղ կամ ի վարժարան որպէս ուսուցչուհի պաշտօնավարել։

Փափաքողը դիմեն առ Խմբագրութիւնս։

ՍՊԱՍՊՕԼ ՅԷՍԻ

Պատեան ապակի մոլիւմ օրատուր վեցն իւպրկ, Զասպիյեն ճատասինակ վագը Շամլը Վէքիաղէսի գարշաբաթի մեզաղամբրատ Ամանպօլուն Էնոյի թաղ-

ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ

Տ. ՍՈՄՋԵԱՆ

ՀԵՌԱԳՐԱՏԱՆ ՓՈՂՈՑ Յ'ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ.

Կը պատրաստուին՝ Այցատոմս, Էթիքէթ, Հրաւիրագիր, Վաճառականական ամէն տեսակ թղթեր ամէն լեզուաւ՝ խիստ վայելուչ եւ դիւրամատչելի գներով։

ԳՈՒՆԱՒՈՐ ՎԻՄԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍԻԿԱՌԻ ԹՈՒՂԹ

LITHOGRAPHIE

D. MOMDJIAN

Rue Télégraphe

Alexandrie

TRAVAUX

en toutes langues

ET

en tous genres

CHROMOLITHOGRAPHIE

ՀԱՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆ

"ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅԻ"

Գ. ՏԱՐԻ, 1889։

ՀԱՆԴԷՍԸ կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը և կը բովանդակէ՝

1. Հին և նոր հայ գրականութեան, պատմութեան եւ այլն վերաբերեալ ազգային ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ընդարձակ յօդուածներ, Եւրոպացի հեղինակաց հայ ազգին վրայ գրած նոր յօդուածոց և գրոց թարգմանութիւններ, գիտական հատուածներ եւ այլն։

2. ԱՐՈՒԵՍՏԳԻՏԱԿԱՆ յօդուածներ։

3. ԲԱՐՈՅԱԿԱՆ վէպեր ու հատուածներ։

4. ԱՅԼԵՒԱՅԼՔ, այն է՝ գիտական աշխարհի նորանոր գիւտեր, գիտական և անեռական նորագոյն մտքեր տեղեկութիւններ եւ այլն։

5. ԲԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, ամսոյ մը մէջ տեղի Եւրոպական քաղաքականութեան առած դրից համառօտ տեսութիւն։

Հանդիսի այս Գ. Տարին աւելի ճոխագոյն պիտի ըլլայ քան նախընթաց տարիներն, նոր և հետաքրքրական յօդուածներով, յաւելուածներով, ժամանակակից ոչնաւոր անձնաւորութեանց պատկերներով, եւ այլն։

Յաւելուածներու յամախութիւնը բաժանորդաց չատութենէն կախուած ունի։

Բաժանորդագրութեան գինն է՝ ճամբու ծախքով՝ տարեկան 8 Ֆր. — 4 ռբ. — 4 Ֆիորին։

Խմբագրութեան հասցէն է՝

Այս տարի ալ վիճակաւ այլեւայլ դրքեր պիտի տրուի բաժանորդաց, որուն վրայ տես Հանդիսի 1889 Թիւ 1։

☞ Խմբագրութիւնս որոշած է Հանդիսի Գ. Տարւոյն չրջանէն ատան օրինակ նուիրել ազգային կարօտ վարժարանաց՝ վիճակահանութեամբ։ Այն վարժարանք՝ որ կը բաղձան մասնակցիլ վիճակահանութեան, պէտք են՝ վարժարանին վարչութեան կնքովն վաւերացեալ խնդրագիր մատուցանել խմբագրութեան։ Խնդրագիրք վաղագոյն հասնելու են խմբագրութեան ձեռքն։

☞ 1889 տարւոյ Հանդիսի Յունուար 1 Թիւն ուղղակի Խմբագրութենէս կրնայ ընդունուիլ 2Ֆրի՝ ուղարկելով 5 սանտ. — 10 փող. — 2 կոպ. նամակաբաշխ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ "ՀԱՆԴԷՍԻ,,

ԽՄԲԱԳԻՐ

Ա. ՌՇՏՈՒՆԻ

Imp. Universelle — F. Mizrahi - Alex.